



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. մայիսին /վերլուծություն/

2012թ. մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 13946 գործարքներ, որոնց քանակը 2012թ. ապրիլի համեմատ աճել է 2.9%-ով, իսկ 2011թ. մայիսի համեմատ նվազել՝ 16.2%-ով:

2012թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3554 օտարման գործարքների 77.8%-ը կազմել են առուվաճառքները, 21.2%-ը՝ նվիրատվությունները և 1.0%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 43.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.0%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2012թ. մայիսին, 2012թ. ապրիլի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 4.2%-ով, իսկ 2011թ. մայիսի համեմատ նվազել ` 12.6%-ով:

2012թ. մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 57.5%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. մայիսին, 2012թ. ապրիլի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 4.4%-ով, իսկ 2011թ. մայիսի համեմատ ` 18.1%-ով:

2012թ. մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մայիս 2011թ.	մայիս 2012թ.	ապրիլ 2012թ.
Կենտրոն	443900	412000	405000
Արաբկիր	342500	339100	335000
Քանաքեռ-Զեյթուն	264300	266100	262300
Նոր-Նորք	226700	228400	225100
Ավան	235500	238050	235100
Էրեբունի	231900	236050	233100
Ծննդավիթ	231400	235100	231000
Դավթաշեն	258200	260000	257500
Աջափնյակ	227700	227000	225050
Մայրաթիա-Սեբաստիա	222900	226000	222000
Նուբարաշեն	147000	140200	140100
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-մարաշից/</b>	<b>257500</b>	<b>255300</b>	<b>251900</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. մայիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. ապրիլի համեմատ, աճել են 1.3%-ով:

2012թ. մայիսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 285 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. ապրիլի համեմատ նվազել է 8.6%-ով իսկ 2011թ. մայիսի համեմատ ` 9.5%-ով:

2012թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մայիս 2011թ.	մայիս 2012թ.	ապրիլ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	129700	112000	110100
	Ապարան	49500	48800	48000
	Թալին	61100	61000	60850
Արարատ	Արտաշատ	98400	91200	91150
	Մասիս	121000	107550	107500
	Վեդի	93000	96200	96100
Արմավիր	Արարատ	80200	73300	73050
	Վաղարշապատ	140800	153000	151200
	Արմավիր	121800	118000	116800
	Մեծամոր	84450	86000	86000

Գնդարքունիք	Սևան	91990	98050	96000
	Գավառ	49600	52500	51000
	Մարտունի	89500	103600	102000
	Վարդենիս	34700	33500	33000
	Ճամբարակ	22200	21100	21100
Լոռի	Վանաձոր	90300	86800	85000
	Ստեփանավան	67200	72000	72000
	Սպիտակ	87300	99800	99000
	Ալավերդի	36500	49500	49000
	Տաշիր	42100	40000	40000
	Թումանյան	12500	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	18600	19500	19500
Կոտայք	Աբովյան	138200	152800	151050
	Նոր Հաճն	123200	128000	127900
	Բյուրեղավան	107500	107000	106800
	Եղվարդ	102700	108500	108000
	Հրազդան	57800	59050	58000
	Ծաղկաձոր	185200	292500	292000
	Չարենցավան	73200	83700	82500
Շիրակ	Գյումրի	105700	108700	107200
	Արթիկ	64200	64200	64100
	Մարալիկ	33800	35600	35600
Սյունիք	Գորիս	126000	115000	114000
	Կապան	104200	89100	88000
	Սիսիան	90200	79900	78000
	Մեղրի	67700	65100	65000
	Ագարակ	38500	39700	39700
	Քաջարան	67300	94050	94050
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	79400	83800	82000
	Եղեգնաձոր	108000	116800	115100
	Զերմուկ	121100	100300	100100
Տավուշ	Դիլիջան	106400	103700	102000
	Իջևան	128300	111800	110000
	Բերդ	48200	48900	48500
	Նոյեմբերյան	39100	41500	41000
	Այրում	27200	24500	24500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. ապրիլի համեմատ, աճել են 0.9%-ով:

2012թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 386 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 122, մարզերում միասին վերցրած՝ 264: 2012թ. մայիսին, 2012թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 10.0%-ով, ընդ որում Երևանում աճել՝ 15.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 7.8%-ով: 2011թ. մայիսի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 16.4%-ով, ընդ որում Երևանում՝ 2.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 21.7%-ով:

2012թ. մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մայիս 2011թ.	մայիս 2012թ.	ապրիլ 2012թ.
Կենտրոն	463500	461500	458900
Արաբկիր	372700	366900	364500
Քանաքեռ Զեյթուն	275500	278900	275200
Նորք Մարաշ	280400	305500	301100
Ավան	241600	258900	255500
Էրեբունի	239000	227800	225300
Շենգավիթ	241500	244500	240000
Դավթաշեն	271500	262800	258300
Աջափնյակ	240400	237800	236700
Մայրթիա Սեբաստիա	233000	226100	223000
Նուբարաշեն	148200	144500	144500
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>273400</b>	<b>274000</b>	<b>271200</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. մայիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. ապրիլի համեմատ աճել են են 1.0%:

2012թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մայիս 2011թ.	մայիս 2012թ.	ապրիլ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	133600	132700	130150
	Ապարան	50900	52100	51200
	Թալին	62200	68600	68450
Արարատ	Արտաշատ	104900	98000	97450
	Մասիս	124800	111000	110100
	Վեդի	95600	100200	99500
	Արարատ	82500	87200	87000
Արմավիր	Վաղարշապատ	159200	151200	150000
	Արմավիր	125200	103600	102000
Գեղարքունիք	Սևան	96000	92500	91000
	Գավառ	50600	51900	50800
	Մարտունի	90300	91200	90100
	Վարդենիս	37800	34000	34000
	Ճամբարակ	24900	25900	25900
Լոռի	Վանաձոր	99700	96100	95000
	Ստեփանավան	67700	87000	86900
	Սպիտակ	94000	113050	111100
	Ալավերդի	37200	46500	46500
	Տաշիր	45500	50100	50100
	Թումանյան	12900	12000	12000
	Շամլուղ	9300	13200	13200
	Ախթալա	19600	29400	29400
Կոտայք	Աբովյան	145600	152000	150000
	Նոր Հաճն	131200	129100	128000
	Բյուրեղավան	109300	119900	119900

	Եղվարդ	107900	115100	114400
	Հրազդան	62800	78800	77000
	Ծաղկաձոր	305000	305000	303600
	Չարենցավան	75000	81800	80000
Շիրակ	Գյումրի	116400	116500	115500
	Արթիկ	65200	61000	61000
	Մարալիկ	36200	48000	48000
Սյունիք	Գորիս	134300	126900	126800
	Կապան	106200	98000	97600
	Սիսիան	91000	88700	87600
	Մեղրի	68600	75000	74000
	Ազարակ	40000	45900	45900
	Դաստակերտ	10500	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	80000	82600	81500
	Եղեգնաձոր	115000	111800	110000
	Ջերմուկ	122800	120000	118400
Տավուշ	Դիլիջան	107600	105000	103000
	Իջևան	137700	120000	119800
	Բերդ	49600	57700	57700
	Նոյնմբերյան	39600	46000	45600
	Այրում	27900	34200	34200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. ապրիլի համեմատ, աճել են 0.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. մայիսին հանրապետությունում օտարվել են 1143 միավոր /1162.47 հա/ հողեր, որից Երևանում՝ 109 միավոր /13.32 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 575 միավոր /1103.78 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.46 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 412 միավոր /42.28 հա/, որից Երևանում՝ 58 միավոր /7.64 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 125 միավոր /8.78 հա/, որից Երևանում՝ 42 միավոր /3.83 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 14 միավոր /4.08 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /1.38 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 3 միավոր /2.22 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 9 միավոր /1.26 հա/ ընդհանուր մակերեսով,
- ջրային հողեր՝ 2 միավոր /0.07 հա/:

2012թ. մայիսին հանրապետությունում օտարված հողերից 990 միավորի /1111.98 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 94 միավոր /12.43 հա/, նվիրատվության գործարքներ՝ 144 միավորի /49.87 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /0.85 հա/ և փոխանակության գործարքներ՝ 9 միավորի /0.62 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.04 հա/:

Հանրապետությունում 2012թ. մայիսին, 2011թ. մայիսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 18.6%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 20.2%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 18.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 75.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 670.26 հա, որից 668.65 հա գյուղատնտեսական նշանակության են:

վաճառված հողերի քանակի 19.3%-ը կամ 191 գործարքներ /116.51 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 21 միավոր /1.52 հա/, իսկ 79.3%-ը կամ 785 միավորը /992.35 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 69 միավոր /10.90 հա/: 2012թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 14 գործարք /3.11 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. մայիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	<b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b>								<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	0	0.00	10	0.63	11	0.89	2	0.46	7	1.38	35	6.36	25	2.69
Արագածոտն	9	45.70	0	0.00	1	0.02	3	0.02	77	622.95	0	0.00	15	1.57	1	0.005
Արարատ	6	18.30	2	1.43	13	1.21	2	0.09	75	59.70	0	0.00	37	3.26	1	0.002
Արմավիր	1	0.03	0	0.00	1	0.01	0	0.00	56	57.21	0	0.00	36	3.77	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	1	0.25	3	0.11	4	0.22	31	40.22	0	0.00	11	1.18	2	0.83
Լոռի	1	0.03	2	0.02	4	0.79	5	0.99	78	102.32	0	0.00	18	1.52	11	0.13
Կոտայք	14	37.87	0	0.00	58	5.10	9	0.21	80	35.33	0	0.00	86	7.99	9	1.06
Ճիրակ	0	0.00	0	0.00	4	0.17	11	0.07	9	13.61	0	0.00	7	0.66	2	0.02
Սյունիք	0	0.00	1	0.002	1	0.06	0	0.00	27	12.71	0	0.00	5	1.06	4	0.22
Վայոց Ձոր	3	1.35	0	0.00	0	0.00	2	0.10	6	4.24	0	0.00	7	0.65	2	0.02
Տավուշ	0	0.00	0	0.00	3	0.33	2	0.28	10	6.17	0	0.00	6	0.57	1	0.005
Ընդամենը	34	103.28	6	1.70	98	8.43	49	2.87	451	954.92	7	1.38	263	28.59	58	4.98

Ստորև ներկայացվում է 2012թ. մայիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	<b>Ուղղակի վաճառք</b>								<b>Աճուրդ վաճառք</b>									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/			
Երևան	10	0.46	0	0.00	5	0.25	5	0.21	11	1.06	0	0.00	0	0.00	5	0.38	6	0.68
Արագածոտն	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	11	45.725	9	45.70	0	0.00	1	0.02	1	0.005
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	23	21.03	6	18.30	2	1.43	13	1.21	2	0.09
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.04	1	0.03	0	0.00	1	0.01	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	8	0.57	0	0.00	1	0.25	3	0.10	4	0.22
Լոռի	1	0.005	0	0.00	0	0.00	1	0.005	11	1.83	1	0.03	2	0.02	4	0.79	4	0.99
Կոտայք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	80	43.07	13	37.76	0	0.00	58	5.10	9	0.21
Ճիրակ	8	0.16	0	0.00	3	0.13	5	0.03	7	0.09	0	0.00	0	0.00	1	0.04	6	0.05
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.062	0	0.00	1	0.002	1	0.06	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	5	1.45	3	1.35	0	0.00	0	0.00	2	0.10
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	5	0.61	0	0.00	0	0.00	3	0.33	2	0.28
Ընդամենը	21	0.64	0	0.00	8	0.38	13	0.26	165	115.54	33	103.17	6	1.70	90	8.04	36	2.63

2012թ. հանրապետությունում մայիսին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք /0.11 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. մայիսին, 2011թ. մայիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 35.7%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 11-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 39.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 48.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 23.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 51.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 2.0 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	9	45.70	27.0	195.7	97.6	40	31.64	365.0	12000.0	3935.5
Ապարան						4	2.60	86.5	2727.3	693.5
Թալին						32	587.25	93.6	5494.5	600.0
Ծաղկահովիտ						1	1.46	79.5	1000.0	235.5
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	1	0.02	8505.1	8505.1	8505.1	34	10.42	335.1	10833.3	2732.6
Մասիս	3	2.77	87.5	507.5	288.7	19	42.06	200.0	11904.8	3046.4
Վեդի	2	15.51	63.5	64.2	63.9	22	7.20	207.0	10795.1	1810.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						30	21.48	294.3	9090.0	1575.5
Բաղրամյան						4	25.84	90.6	2561.1	730.0
Վաղարշապատ	1	0.03	2013.1	2013.1	2013.1	22	9.90	444.4	11764.7	2735.5
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						19	9.17	199.8	1875.0	397.5
Ճամբարակ								60.5	953.3	332.1
Մարտունի						1	0.12	51.1	2850.0	725.5
Սևան								52.2	2134.8	315.3
Վարդենիս						11	30.92	41.2	2575.1	377.5
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի								170.4	6424.2	672.5
Գուգարք						8	1.23	234.6	6065.9	751.3
Սպիտակ						4	4.91	250.0	5555.5	728.1
Ստեփանավան	1	0.03	1325.1	1325.1	1325.1	6	7.30	90.6	1686.6	295.6
Տաշիր						60	88.89	45.3	1384.4	141.1
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	8	31.14	17.4	1297.1	360.2	24	12.79	279.3	11942.7	4693.3
Եղվարդ	1	0.12	1308.5	1308.5	1308.5	43	15.40	174.4	11971.8	2821.3
Հրազդան	4	6.50	338.6	763.3	501.1	11	6.66	130.5	10256.4	1900.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						6	10.27	252.0	1693.1	580.0
Ամասիա								40.9	261.0	128.5
Անի						3	3.34	110.6	546.9	370.0
Աշոգք								58.5	215.8	121.5

Արթիկ								79.4	1428.6	378.4
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								5	2.60	92.6
Կապան								3	0.31	120.0
Մեղրի								4	0.64	193.0
Սիսիան								15	9.17	46.3
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր								6	4.24	125.0
Վայք	3	1.35	107.8	107.8	107.8				58.8	1430.7
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ									213.3	3783.8
Իջևան								1	0.27	267.5
Նոյնմբերյան								9	5.90	46.7

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						9	8110.0	130.7	22200.0	2571.8
Ապարան						5	4785.0	124.1	609.6	364.5
Թալին	1	235.0	90.0	90.0	90.0	1	2800.0	63.2	1454.8	152.2
Ծաղկահովիտ								60.0	214.3	86.3
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	12	11738.4	849.7	850.6	850.4	8	8830.0	173.9	7140.3	892.7
Մասիս	1	400.0	198.9	198.9	198.9	20	15108.0	187.5	25000.0	1215.3
Վեդի						9	8644.0	126.1	5000.0	660.5
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	1	110.0	3463.6	3463.6	3463.6	13	13739.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան								100.0	833.3	232.5
Վաղարշապատ						23	23997.0	197.4	26528.4	1526.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						1	1750.0	186.6	1084.3	661.5
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի	1	414.0	119.1	119.1	119.1	8	7697.0	119.3	5000.0	278.3
Սևան	2	597.6	118.5	338.5	228.5	1	1290.0	240.0	3110.4	305.1
Վարդենիս						1	1100.0	72.5	987.2	150.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի								114.3	1388.9	216.0
Գուգարք						9	6345.0	77.9	14083.3	1072.3
Սպիտակ	2	2275.0	143.8	607.5	375.6	7	5830.0	104.9	1348.3	204.4
Ստեփանավան						2	3062.0	88.2	1666.7	175.5
Տաշիր	2	5601.0	148.3	297.5	222.9			45.3	400.0	90.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	12	13797.9	323.0	1292.0	969.5	45	38757.7	264.5	35353.5	1960.0



Եղվարդ	46	37226.0	645.2	3812.5	2711.0	34	33110.3	173.6	27000.0	2842.4
Հրազդան						6	7550.0	117.7	34848.5	1320.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	400.0	1155.0	1155.0	1155.0	2	1700.0	113.6	18750.0	331.3
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						3	2878.2	67.9	180.6	160.0
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ						2	2030.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	600.0	891.0	891.0	891.0	3	7815.0	112.2	1700.0	371.6
Կապան						1	745.0	67.9	2638.9	296.1
Մեղրի								68.5	632.9	190.0
Սիսիան						1	2000.0	123.5	875.0	195.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						5	5045.0	96.7	7659.6	500.0
Վայք						2	1500.0	120.7	1448.3	200.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	110.3
Իջևան	2	1856.5	151.2	158.4	154.8	3	2467.0	74.1	14423.1	515.2
Նոյեմբերյան	1	1483.0	176.0	176.0	176.0	3	3270.0	125.0	1948.1	221.0

2012թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 711 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.1%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 67.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2012թ. մայիսին, 2012թ. ապրիլի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 5.7%-ով, իսկ 2011թ. մայիսի համեմատ՝ 9.0%-ով:

2012թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 32 բնակարանների, 66 անհատական բնակելի տների, 369 հասարակական, 67 արտադրական նշանակության օբյեկտների, 150 միավոր /538.48 հա/ հողերի, 2 այգետնակներ և 25 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. մայիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 21 վարձակալության գործարքների /այդ թվում՝ 8 միավոր՝ 0.34 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2012թ. ապրիլի համեմատ նվազել է 25.0%-ով, իսկ 2011թ. մայիսի համեմատ՝ 8.7%-ով: 2012թ. մայիսին հանրապետությունում վարձակալված 538.48 հա հողերից 1.64 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 536.85 հա հողերից 270.00 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.29 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 273.69 հա, որից 27.23 հա գյուղատնտեսական նշանակության: 2012թ. մայիսին հանրապետության մարզերում վարձակալվել են 260.37 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2012թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1916 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.7%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. ապրիլի համեմատ, նվազել է 8.4%-ով, իսկ 2011թ. մայիսի համեմատ նվազել՝ 25.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.8%/, առանձնատների /25.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.6%/ և հողերի /6.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1028 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. ապրիլի համեմատ, նվազել է 1.3%-ով, իսկ 2011թ. մայիսի համեմատ՝ 6.5%-ով:

2012թ. մայիսին հանրապետությունում գրավադրվել են 310.37 հա հողեր, որից 73.55 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 75.8%-ը կամ 235.27 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 3.78 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 119.62 հա, որից 118.19 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. մայիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 140 գործարքներ, որից 100-ը՝ Երևանում: 2012թ. ապրիլի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 18.6%-ով, ընդ որում Երևանում՝ 15.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 54.0%-ով: 2011թ. մայիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 33.6%-ով, ընդ որում Երևանում՝ 29.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 42.9%-ով:

2012թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1833 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2012թ. ապրիլի համեմատ աճել է 32.4%-ով, իսկ 2011թ. մայիսի համեմատ նվազել է՝ 30.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /37.9%/:

***ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե***